

<https://doi.org/10.46991/hc.2022.17.1.217>

Նժդեհ Երանյան

պ. գ. թ., ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության
ինստիտուտի գիտաշխատող, Հայաստանի պատմության
թանգարանի գիտական գծով փոխտնօրեն

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԳՈՏՈՒՄ Ք.Ա. X-V ԴԴ. ՀՆԱԿԼԻՄԱՅԱԲԱՆԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ¹

Հիմնաբառեր. Եվրասիական գոտի,
կլիմայական փոփոխություններ, կիմաերներ և
սկյութներ, Հայկական լեռնաշխարհ, Վոլգա, Դոն,
Դնեպր, մարդակերպ կոթողներ:

*Բնական տարբեր երևույթները, այդ թվում՝ և կլիմայական փոփոխություններն ու
դրանից բխող հասարակական տարբեր դրսևորումները, վերջին մի քանի
տասնամյակներում տարբեր ոլորտի մասնագետների ուշադրության կենտրոնում են:*

*Չնայած առկա հետազոտություններին՝ Հայկական լեռնաշխարհի կլիմայական
փոփոխությունների վերաբերյալ հետազոտություններում ավելի քիչ են ներկայացված
կլիմայական փոփոխություններով արտահայտված հասարակություն-բնություն կապերի
լայն հարցերը, ինչպես, օրինակ, մեծ արեալում հասարակությունների տեղաշարժերն ու
նրանց կացութաձևի փոփոխությունը:*

*Այս հետազոտության նպատակն է ներկայացնել կլիմայական փոփոխությունները
Եվրասիական որոշ գոտիներում Ք.ա. II հազարամյակի վերջին ու I հազարամյակի սկզբին
և դիտարկել դրանց ազդեցությունը տարբեր գեղերի ու մշակույթների տեղաշարժերի վրա:
Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մեզ հետաքրքրող Եվրասիական գոտում
վերջին 5000 տարում տեղի է ունեցել մի քանի սառեցում, ինչն իր հերթին բերել է
գերխոնավեցման: Այսինքն՝ Եվրասիական գոտում Ք.ա. II հազարամյակի վերջում
ստեղծվել էր բնական պայմանների մի այնպիսի իրավիճակ, երբ սնունդ ստանալը
բարդացել էր: Ուստի տրամաբանական է, որ այդ տարածքներում ապրող գեղերը միասին
կամ առանձին-առանձին պետք է լքեին իրենց բնակավայրերը՝ ավելի բարենպաստ
պայմաններ հայտնաբերելու ակնկալիքով: Հավանաբար կլիմայական փոփոխություններն
էին նաև պատճառը, որ դատելով հնագիտական նյութից՝ գրեթե ամբողջ Կովկասում
տարածվում են որոշ գեղեր, որոնց բնորոշ էր նոր տնտեսաձև և մշակույթ: Գրավոր ու
հնագիտական աղբյուրների համադրությունը թույլ է տալիս ենթադրել, որ դրանց շարքում
առանձնակի դերակատարում են ունեցել այն գեղերը, որոնք մասնագիտական
գրականության մեջ հայտնի են «կիմաերական ու սկյութական գեղեր» անվամբ:*

¹ Հետազոտությունը կատարվել է ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 20TTSH-005 ծածկագրով գիտական թեմայի շրջանակում:

Հնագիտություն և Ազգագրություն / Archaeology and Ethnography

Եվրասիական գոտում Ք.ա. X-V դարերի հնակլիմայաբանական իրավիճակի ուսումնասիրությունը և բնակչության շարժունության խնդիրները
The Study of the Paleoclimatic Situation and the Problem of Population Mobility in the Eurasian Zone of the 10th -5th Centuries. BC.

Nzhdeh Yeranyan

*PhD, Institute of Archaeology and Ethnography NAS RA, researcher,
History Museum of Armenia, Deputy Director on the Field of Science*

THE STUDY OF THE PALEOCLIMATIC SITUATION AND THE PROBLEM OF POPULATION MOBILITY IN THE EURASIAN ZONE OF THE 10TH-5TH CENTURIES. BC.

Keywords: Eurasian zone, climatic changes, Cimmerians and Scythians, Armenian Highland, Volga, Don, Dnieper, anthropomorphic stelae.

Various natural phenomena, including climate change and various social manifestations resulting from them, have been in the focus of attention of specialists in various fields in recent decades.

Despite the available research, the works on climate change in the Armenian Highlands to a lesser extent present the broad issues of the relationship between society and nature, expressed in climate change, such as the movement of societies over a large area and the change in their way of life.

The purpose of this study is to present climatic changes in some zones of Eurasia at the end of the 2nd and the beginning of the 1st millennium BC. and consider their influence on the movements of different tribes and cultures.

Studies show that over the past 5000 years, the Eurasian zone of interest to us has experienced several cooling events, which in turn led to over-humidification. In other words, in the Eurasian zone at the end of the 2nd millennium BC. a situation of natural conditions was created, when the extraction of food became difficult. Therefore, it is quite logical that the tribes living in those areas, together or separately, had to leave their settlements in the hope of finding more favorable conditions.

Probably, climatic changes were also the reason that, judging by the archaeological material, some tribes, which were characterized by a new economy and culture, settled almost throughout the Caucasus. The combination of written and archaeological sources suggests that a special role among them was played by tribes known in professional literature as "Cimmerian and Scythian tribes".

Нжде Еранян

*кандидат исторических наук, научный сотрудник
Института археологии и этнографии ИАН РА,
заместитель директора по научной работе Музея истории Армении*

ИЗУЧЕНИЕ ПАЛЕОКЛИМАТИЧЕСКОЙ СИТУАЦИИ И ПРОБЛЕМЫ МОБИЛЬНОСТИ НАСЕЛЕНИЯ В ЕВРАЗИЙСКОЙ ЗОНЕ В 10-5 ВВ. ДО Н.Э.

Ключевые слова: Евразийская зона, климатические изменения, киммерийцы и скифы, Армянское нагорье, Волга, Дон, Днепр, антропоморфные изваяния.

Разные природные явления, в том числе изменения климата и вытекающие из них различные социальные проявления, в последние десятилетия находятся в центре внимания специалистов различных областей.

Несмотря на имеющиеся исследования, в работах по климатическим изменениям Армянского нагорья в меньшей степени представлены широкие вопросы отношений общества и природы, выражающиеся в климатических изменениях, такие как перемещения социумов на большой территории и изменение их образа жизни.

Целью данного исследования является представление климатических изменений в некоторых зонах Евразии в конце 2-го и начале 1-го тысячелетий до н.э. и анализ их влияния на передвижения разных племен и культур.

Исследования показывают, что за последние 5000 лет в интересующей нас евразийской зоне произошло несколько похолоданий, что в свою очередь привело к сверхувлажнению. Другими словами, в евразийской зоне в конце 2-го тысячелетия до н.э. создалась ситуация природных условий, когда добыча пищи стала затруднительной. Поэтому вполне логично, что племена, проживающие в тех районах, вместе или по отдельности должны были покинуть свои поселения в надежде найти более благоприятные условия.

Вероятно, климатические изменения явились и причиной того, что, судя по археологическому материалу, некоторые племена, для которых были характерны новое хозяйство и культура, расселились почти по всему Кавказу. Сочетание письменных и археологических источников позволяет предположить, что особую роль среди них играли племена, известные в профессиональной литературе как «киммерийские и скифские племена».

* * *

Ներածություն: Բնական տարբեր երևույթները, այդ թվում՝ և կլիմայական փոփոխություններն ու դրանից բխող հասարակական տարբեր դրսևորումները, վերջին մի քանի տասնամյակներում հնագետների, պատմաբանների ու մշակութաբանների ուշադրության կենտրոնում են: Այդ փոփոխությունների տարբեր կողմերին նվիրված բազմաթիվ հրատարակություններ կան՝ գիտահանրամատչելիից մինչև ակադեմիական ժողովածուներ ու մենագրություններ: Չնայած դրան, որքան մեզ է հայտնի, Հայկական լեռնաշխարհի կլիմայական փոփոխությունների վերաբերյալ հետազոտությունները վերաբերում են դրա արդյունքում ի հայտ եկած առանձին դրվագների միայն (Косян, 1998, 45-52; Քոսյան, 1999; Գրեկյան, 2017, 35-71; Գրեկյան, 2019, 35-71; Գրեկյան, 2021, 192-218): Եվ ավելի քիչ են ուսումնասիրվել կլիմայական փոփոխություններով արտահայտված հասարակություն-բնություն կապերի լայն հարցերը, ինչպես, օրինակ, մեծ արեալում հասարակությունների տեղաշարժերն ու նրանց կացութաձևի փոփոխությունը: Սակայն փաստ է, որ միջավայրի փոփոխությունները լրջորեն ազդել են հասարակությունների վարքի վրա, և տարբեր շրջաններում բնապահպանական «մարտահրավերին» զուգահեռ

Հնագիտություն և Ազգագրություն / Archaeology and Ethnography

Եվրասիական գոտում Ք.ա. X-V դարերի հնակլիմայաբանական իրավիճակի ուսումնասիրությունը և բնակչության շարժունության խնդիրները
The Study of the Paleoclimatic Situation and the Problem of Population Mobility in the Eurasian Zone of the 10th -5th Centuries. BC.

հասարակական խմբերի արձագանքը փոխվել է: Բնական միջավայրի անգամ աննշան փոփոխությունները մեծ ազդեցություն են թողել հասարակությունների տնտեսական գործունեության վրա: Ընդ որում՝ տարբեր տեղերում կլիմայական պայմանների միևնույն փոփոխությանը տարբեր հասարակություններ երբեմն արձագանքել են ոչ միանման:

Ըստ Ի. Իվանովի և Տ. Լուկովսկայի՝ կարելի է առանձնացնել հասարակությունների՝ կլիմայական փոփոխություններով պայմանավորված արձագանքի հինգ հիմնական տիպ.

Ռեակցիայի բացակայություն – երբ բնակչության միջավայրի աննշան փոփոխությունների դեպքում տեղի է ունենում ռեսուրսների վերաբաշխում, և հասարակությունների վարքն էապես չի փոխվում:

Կենցաղվարության տնտեսական և մշակութային տիպերի ամբողջական կամ մասնակի փոփոխություններ – էկոլոգիական փոփոխություններով պայմանավորված տնտեսության վարման ձևի փոփոխություն, որն ուղղված է լինում արտադրողականության ավելացմանը կամ պակասեցմանը:

Բնակչության միգրացիոն ներհոսք կամ արտահոսք – տարածքի՝ փոքր խմբերով լքելուց մինչև ամբողջական դատարկում կամ, ընդհակառակը, բնակչության թվի կտրուկ աճ:

Սոցիալ-հասարակական կյանքի էական փոփոխություններ – հողային և ջրային ռեսուրսների, ինչպես նաև սեփականության ձևերի հարաբերությունների փոփոխություններ:

Հասարակության աստիճանական կամ արագ դեգրադացում կամ անկում, երբ հասարակությունները ունակ չեն լինում ադապտացվելու էկոլոգիական փոփոխություններին, և տեղի է ունենում աստիճանական անկում (Иванов, Луковская, 1997, 85):

Տրամաբանական է, որ կլիմայական պայմանների վատթարացումը, օրինակ՝ չորացումը կամ էական սառեցումները, այսինքն՝ երևույթներ, որոնք բերում են կենդանիների սննդային բազայի կրճատմանը այն հասարակությունների դեպքում, որոնց համար խոտը սննդի գրեթե միակ «աղբյուրն» է, սպառնում էր սովով և ստիպում էր մարդկանց տեղափոխվել առավել բարենպաստ շրջաններ:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մեզ հետաքրքրող Եվրասիական գոտում վերջին 5000 տարում տեղի է ունեցել մոտավորապես հինգ էական սառեցում (Тайров, 2003, 16), ինչն իր հերթին հանգեցնում էր գերխոնավեցման: Ըստ տարբեր մասնագետների՝ Ք.ա. II հազարամյակի վերջերին տեղի ունեցած կլիմայական կտրուկ սառեցումները, որոնք տեղ-տեղ ձգվեցին մինչև Ք.ա. V դարի առաջին կեսը, զագաթնակետին էին հասել Ք.ա. 1100-ական թթ. (Клименко, 1998, 7; Arie, Mattanyah, 2007, 164): Այսինքն՝ Եվրասիական գոտում Ք.ա. II հազարամյակի վերջում ստեղծվել էր բնական պայմանների մի այնպիսի իրավիճակ, երբ սնունդ ստանալը բարդացել էր:

Կլիմայական փոփոխությունները ցնցումներ էին առաջացրել այլ շրջաններում ևս: Ըստ հետազոտողների՝ կլիմայական փոփոխություններով պայմանավորված՝

հասարակական ճգնաժամային իրավիճակ էր նաև Մերձավոր Արևելքում և Էգեյան ծովի ավազանում (Drake, 2012, 1862-1870):

Հավանական է, որ հին Առաջավոր Ասիայի պատմական աղբյուրներում վկայված բնակչության զանգվածային տեղաշարժերը ևս փոխկապակցված էին կլիմայական գործոնների հետ:

Այս հետազոտության նպատակն է ներկայացնել կլիմայական փոփոխությունները Եվրասիական որոշ գոտիներում Ք.ա. II հազարամյակի վերջին և I հազարամյակի սկզբին և դիտարկել դրանց ազդեցությունը տարբեր ցեղերի ու մշակույթների տեղաշարժերի վրա:

Կիմերների և սկյութների հայտնվելն ու սփռումը: Վաղ երկաթի դարաշրջանում Եվրասիական տափաստաններում ի հայտ է գալիս կենցաղավարման նոր ձև, որը մասնագետներն անվանում են քոչվոր անասնապահություն: Դրան զուգահեռ նույն տարածքում ձևավորվում է մշակութային նոր տիպ: Հենվելով գրավոր աղբյուրների, մասնավորապես Հերոդոտոսի և այլ աղբյուրների վրա՝ կարելի է ենթադրել, որ այդ մշակույթի տարածումը էապես կապված էր նոր ցեղերի ներթափանցման հետ (Поррѳова М., Раевский Д., 1992, 25), որոնք մասնագիտական գրականության մեջ հայտնի է «կիմերական ու սկյութական ցեղեր» անվամբ (տե՛ս, օրինակ, Phillips, 1972, 129-138)²:

Ըստ այդ աղբյուրների՝ Ք.ա. VIII դարի վերջերից սկսվում են կիմերական արշավանքները, իսկ քիչ ավելի ուշ՝ Ք.ա. VII դարում, պատմության մեջ հայտնվում են նաև սկյութները:

Չնայած պատմական թատերաբեմ այս երկու ցեղերը հայտնվեցին գրեթե միաժամանակ, և նրանց քաղաքական պատմությունն ու մշակութային կերպարը շատ հաճախ ընդհանրացվում են, այնուամենայնիվ կիմերների ու սկյութների փոխհարաբերությունների հարցը վերջնականապես հստակեցված չէ, և այս մասին կան բազմաթիվ տեսակետներ: Հերոդոտոսը նրանց հիշատակում է իբրև թշնամիներ, սակայն հետազոտողների մեծ մասը հակված է այդ կարծիքը համարել թերի և նրանց համարել է դաշնակիցներ կամ առնվազն կենցաղով, հետևաբար նաև ապրելակերպով մոտ: Այստեղ քաղաքական դաշնակցությունից զատ՝ հարկ է հասկանալ, թե ինչպիսի մշակութային կապեր են ունեցել այս ցեղերը: Անկախ սկյութների ներթափանցման ուղուց և սկյութների ու կիմերների միջև հարաբերություններից՝ ակնհայտ է, որ սկյութները Կովկաս են ներխուժել կիմերներից ավելի ուշ. ելնելով առկա նյութից՝ կարելի է ենթադրել, որ այն տեղի է ունեցել Ք.ա. VII դարի սկզբներին³: Համենայն դեպս, ո՛չ գրավոր սկզբնաղբյուրները և ո՛չ

² Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի Առաջավոր Ասիայի իրադարձությունների վերաբերյալ համեմատաբար քիչ սկզբնաղբյուրներ կան: Այս շրջանը որոշ չափով արտացոլված է ասսուրական գրավոր տեքստերում, առանձին հիշատակություններ կան հինկտակարանային մարգարեներին վերագրվող տեքստերում (Մարգ. Երեմ. ՕՍ, 27), իսկ որոշ տեղեկություններ առկա են հույն ու հռոմեացի հեղինակների մոտ, մասնավորաբար՝ Քսենոփոնի (Քսենոփոն, 103, 105), Ստրաբոնի (Տրաբոն, 277, 466, 504), Դիոդորոս Միլիլիացու (Դիոդորոս Միլիլիացի 1985, 20, 44-45), իսկ առավել ամբողջական՝ Հերոդոտոսի (Հերոդոտոս 1986, 222-288) աշխատություններում: Վերջինս Ք.ա. 450 թ. այցելել է Մերձսևծովի հյուսիսային շրջաններ և տեղեկություններ հաղորդել կիմերների ու սկյութների վերաբերյալ:

³ Ս. Դուդարևն իր ընդգրկուն հոդվածում առանձնացնում է կիմերների՝ Առաջավոր Ասիա ներխուժման երկու ալիք՝ ենթադրելով, որ կիմերների «երկրորդ ալիքի» (սկսած Ք.ա. VII դարի 70-ական թվականներից) հնագիտական մշակույթը կարելի է համարել վաղսկյութական (Дударев 1998, 78): Սակայն այս տեսությունը բավարար համոզիչ չէ Ս. Բվանչիկի համար: Ըստ վերջինի՝ «կիմերական մշակույթ» տերմինը առաջ է քաշվել Հյուսիսային Մերձսևծովի նախասկյութական հնագիտական մշակույթի առաջին հետազոտողների կողմից, ինչը ներկայումս հաստատորեն մտել է հնագիտական գրականություն և գործածվում է որպես Հյուսիսային Մերձսևծովում նախասկյութական մշակույթի ցուցիչ: Նա կարծում է, որ «կիմերներ» անվանումը սկսել է գործածվել ընդհանրացված՝ առաջին հերթին նշելու համար Ք.ա. VII դարի վերջին կամ VI դարում նորբաբելական թագավորության գրիչների կողմից հիշատակվող միջինասիական սակերին (Иванчик А. 1999, 85): Չափազանց կարևոր է, որ արդեն ուշբաբելոնական տեքստերում «կիմերներ» անվանումը գործածվում

Էլ հնագիտական աղբյուրները չեն ներկայացնում Կովկասում նրանց ավելի վաղ հայտնվելու օգտին փաստեր: Շուրջ մեկուկես դար վերոհիշյալ տարածքներում կարևոր դերակատարում ունեցած այս ցեղերը մոտավորապես Ք.ա. VI դարի երկրորդ քառորդից աստիճանաբար թողեցին Առաջավոր Ասիայի սահմանները և, ըստ Հերոդոտոսի, վերադարձան իրենց հայրենիք (Հերոդոտոս 1986, 222-223), իսկ մի մասը գուցե մնաց և ձուլվեց տեղի ժողովուրդներին:

Այնուամենայնիվ, մեր կողմից նպատակ չի դրվել այստեղ կիմներների ու սկյութների ծագմանը նվիրված հետազոտության ամբողջական պատմագրական վերլուծություն տալու: Ներկա հետազոտության մեջ ներկայացվել են զուտ այն հիմնական խնդիրները, որոնք պայմանավորված են կիմներների ու սկյութների՝ դեպի Առաջավոր Ասիա և հատկապես Կովկաս ներթափանցման, արշավանքների, բնակեցման հանգամանքներով ու դրանց հնարավոր պատճառներով:

Կլիմայական պայմանները Եվրասիական տափաստանային գոտում Ք.ա. I հազարամյակին առաջին կեսին: Մեր վարկածը քննարկելու, այսինքն՝ այն հաստատելու կամ մերժելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել Ք.ա. I հազարամյակի ընթացքում կլիմայական տատանումները Դոնի ավազանում, այսինքն՝ այն տարածքներում, որտեղից սփռվել են այդ ցեղերը:

Կարող ենք համարել, որ միգրացիայի համար Ք.ա. II հազարամյակի վերջում ելակետային տարածքները եղել են Դոն գետի ավազանի տափաստանային շրջաններն ու շրջակայքը, և նրանց տեղաշարժման խնդիրները դիտարկելիս հարկ է ուսումնասիրել այդ գոտու կլիմայական իրավիճակը քննարկվող ժամանակաշրջանում:

Դոնի ավազան: Ըստ Վ. Դեմկինի և իր գործընկերների (Демкин, Демкина 2003, 181)՝ Եվրասիական տափաստանային գոտում ամբողջ բրոնզի դարն աչքի է ընկել նորմայից ավել չորությամբ, որը Ք.ա. III հազարամյակի երկրորդ կեսին հասել է առավելագույնի: Սակայն արդեն Ք.ա. II հազարամյակի երկրորդ կեսին մի շարք շրջաններում (այդ թվում՝ և՛ Ներքին Դոնում, և՛ Վոլգա-Ուրալյան միջագետքում) փաստվել է մթնոլորտային խոնավության աճ, որը Ք.ա. II-I հազարամյակների միջակայքում դարձյալ փոխարինվել է չորային կլիմայով: Ուստի հավանական է, որ Եվրասիայի տափաստաններում այս կտրուկ չորացումը Ք.ա. II հազարամյակի վերջում և I հազարամյակի սկզբին առաջ է բերել միգրացիա (Таиров, 2003, 17):

Վոլգա-Դոն միջագետքի հյուսիսային հատվածում՝ Վոլգայից մինչև Ներքին Նովգորոդ (մինչև Վոլգոգրադ), որտեղ բարձրությունը մինչև 375 մ է, Ք.ա. III հազարամյակից մինչև II հազարամյակի երկրորդ կեսը, ինչպես նաև Ք.ա. I հազարամյակում տարածքների մեծ

Է սկյութներին ու սակերին նշելու համար: Այս ամենը փաստում են կիմներների ու սկյութների մշակույթների մերձ լինելը և այն տեսակետը, համաձայն որի՝ կիմներները Առաջավոր Ասիա իրենց ներխուժման ժամանակ եղել են «վաղսկյութական» հնագիտական մշակույթի կրողներ, առավել հիմնավոր է: Համադրելով եղած տեղեկություններն ու քննարկումները՝ կարող ենք եզրակացնել, որ խոսքը երկու տարբեր խմբերի մասին է, որոնք եղել են մշակույթով, հավանական է՝ լեզվական ու էթնիկական տեսանկյունից միմյանց շատ մոտ, բայց և այնպես հստակորեն առանձնացել են: Այդ տարբերությունները, սակայն, մեզ հաջողվում է սահմանել գրավոր աղբյուրների շնորհիվ: Նյութական մշակույթում երկու էթնիկական խմբերի տարբերությունը, եթե այդպիսիք կան, դժվար է նկատել (Иванчик А., 1999, 96-97): Կարելի է ամփոփել, որ կիմներներն ու սկյութները Առաջավոր Ասիայում հանդես են գալիս ոչ թե որպես թշնամիներ, ինչպես նրանց նկարագրում է Հերոդոտոսը, այլ «դաշնակիցներ»:

մասում հողային պայմաններում տեղի են ունեցել հիդրոմորֆ ու կիսահիդրոմորֆ վիճակից անցում դեպի ավտոմորֆ վիճակի (Таиров, 2003, 38-39), այսինքն՝ գոլորշացումը գերազանցել է տեղումների քանակին, տեղի է ունեցել չորացում և գյուղատնտեսության համար անբարենպաստ պայմանների ձևավորում:

Իսկ ահա Վոլգա և Դոնիջագետքի հարավային հատվածներում Ք.ա. II հազարամյակի երկրորդ կեսից I հազարամյակի առաջին կեսն ընկած ժամանակահատվածը բնութագրվում է համեմատաբար խոնավ կլիմայական պայմաններով, իսկ I հազարամյակի վերջում՝ դարձյալ չորային կլիմայի որոշ սաստկացմամբ (Таиров, 2003, 40-41):

Դնեպր և Դոն գետերի ավազաններում Ք.ա. II հազարամյակի երկրորդ կեսից մինչև Ք.ա. VIII դարն ընկած ժամանակահատվածում կլիմայական փոփոխությունների պատճառով հյուսիսային լայնատերև անտառային գոտիները, որոնք ամենատարածվածն են եղել այս կողմերում, աստիճանաբար իջնում են դեպի հարավային գոտիներ: Արդյունքում տափաստանային գոտիներում շատանում են մեզոֆիտ բույսերը: Սա փոփոխություններ է առաջ բերում հասարակական տնտեսաձևում, քանի որ գյուղատնտեսությամբ զբաղվելը բարդանում է, և որոշ հասարակություններ լքում են իրենց բնակավայրերը:

Կլիմայական տատանումները, ինչպես արտացոլված է ճահճային բուսաբանական նստվածքների կազմում, ճշգրիտ թվագրվել է Ք.ա. 850 թվականի շրջակայքով: Այս կլիմայական տեղաշարժը գրանցվել է նաև Կենտրոնական Եվրոպայում և ուժեղ կլիմայական ազդեցություն է ունեցել Արևելյան Եվրոպայում, ներառյալ Վերին Վոլգայի շրջանը (Bokovenkob et al, 2004, 1739):

Այսպիսով՝ տեսնում ենք, որ Դոն գետի ավազանի տարբեր հատվածներում Ք.ա. II հազարամյակի վերջից I հազարամյակի սկիզբը նկատվում է կլիմայի չորացում, ինչն առաջացնում է տնտեսաձևի փոփոխություն: Արդյունքում այս տարածքները բնակեցրած կլիմներներն ու սկյութները մեծ խմբերով լքում են իրենց բնակավայրերը:

Խոսելով կլիմաների և սկյութների տեղաշարժերի մասին՝ ժամանակին Չարլզ Բրնին ևս առաջ է քաշել այն վարկածը, որ նրանց տեղաշարժերն ու ներխուժումը դեպի Ուրարտու արագացան՝ կլիմայական փոփոխություններով պայմանավորված (Burney, 1972, 185):

Հնագիտական աղբյուրները: Նկատելի է, որ մոտավորապես այն նույն ժամանակահատվածում, երբ եվրասիական անտառային տափաստանային ու տափաստանային գոտիներում սկսվում են կլիմայական փոփոխություններ, երբ իրար հաջորդում են գերխոնավ և չորային կլիմաները, Կովկասում՝ հնագիտական սկզբնաղբյուրներն ու գրավոր աղբյուրները փաստում են նոր մշակույթի՝ կլիմաների ու սկյութների և «կուրգանային մշակույթի»՝ այս տարածաշրջան ներթափանցման մասին (Anthony, 1986, 291):

Կովկասում սկյութական ներկայությանը ու դրանց ներթափանցմանը նվիրված բավական ծավալուն աշխատություններ կան (Есаян, Погребова, 1985; Bouzek, 1983, 177-241):

Մ. Պոգրեբովան, խոսելով այս Կովկասի և հարևան շրջանների միջև մշակութային փոխառնչությունների մասին, ընդգծում է Կովկասի որոշ շրջանների ու Զիվիեից գտնված

դաշույնների ընդհանրությունների մասին, որոնք հետազոտողին հիմք են տալիս խոսելու Ուրմիա լճի հարավի և Կովկասի միջև գոյություն ունեցած կապի մասին առնվազն Ք.ա. II հազարամյակի վերջին և I հազարամյակի սկզբին (Поррцова, 1981, 51):

Կովկասի հաջորդ շրջանը, որտեղ մասնագետները խոսում են սկյութների հավանական ներկայության մասին, Մինգեչաուրի շրջանն է: Տարածաշրջանի հնագիտական տվյալները խոսում են այն մասին, որ հենց ակտիվ սկյութա-կիմմերական արշավանքների շրջանում է, որոնց մասին հիշատակվում է գրավոր սկզբնաղբյուրներում, որ Մինգեչաուրում հայտնվում են նոր թաղումային հուշարձաններ ու ծեսեր, որոնք էլ արդեն փաստում են այստեղ նոր էթնիկական տարրի ներթափանցումը: Այստեղ հայտնված ցեղային վերնախավի դամբանաբլուրային թաղումները և համայնքի շարքային անդամների հիմնահողային գերեզմանները խոսում փաստեր էին այդ ցեղերի ներկայության մասին: Այս ամբողջ պատկերը հիշեցնում է Մերձսևծովի տափաստաններում հայտնի թաղումները, որտեղ ռազմիկ-հեծյալի թաղումները հայտնի են եղել Ք.ա. I հազարամյակի սկզբից: Նշված դամբարաններում հաճախ հանդիպում են տիպիկ սկյութական կոր դաշույններ: Նրանց շարքում հանդիպում են նաև սկյութական ակինակներին նման սրեր, նիզակի ծայրեր (Алиев, 1979, 5-9):

Այսինքն՝ ոչ միայն պատմական աղբյուրները, այլև հնագիտական տվյալներն են հաստատում կիմմերների ու սկյութների ներկայությունը ամբողջ Կովկասում: Քաղաքականից բացի՝ դա ուներ նաև բնական պատճառներ. տարածքը բարենպաստ էր ինչպես անասնապահության, այնպես էլ առևտրային հարաբերությունների համար. այս տարածքները ելակետային դիրք էին նշված ցեղերի համար (Крупинов, 1958, 176-195, տե՛ս նաև Трейстер, 2014, 235-244):

Մարդակերպ կոթողները և սկյութական տեղաշարժերը: Բոլոր բերված օրինակները թույլ են տալիս պնդել, որ Կովկասի բնակիչները կապեր են ունեցել Իրանի, հատկապես նրա հյուսիսարևմտյան շրջանների հետ՝ սկսած առնվազն Ք.ա. II հազարամյակից (Поррцова, 1971, 193-195):

Հայկական լեռնաշխարհի արևելյան հատվածները՝ Արցախն ու Ուտիքը, կամ առնվազն նրանց տափաստանային հատվածները, եթե ոչ ամբողջությամբ, ապա գոնե մասամբ տեղավորվում էին Կովկասը Իրանին կապող հին ճանապարհների վրա: Հավանաբար հետագայում նույն ճանապարհից են օգտվել նաև կիմմերա-սկյութական ցեղերը, որոնք իրենց մշակութային հետքն են թողել այս տարածքներում, որի մասին, ի թիվս այլ գտածոների (Թումանյան, 2019, 219-240), վկայում են Արցախի տափաստաններից (այժմ՝ Մարտակերտի շրջան և շրջակայք) հայտնաբերված քարե մարդակերպ կոթողները, որոնք կարելի է համարել այս տարածաշրջանում տվյալ կապերի մասին փաստող գլխավոր հուշարձանները: Այս կոթողները ուղղանկյունատեսք, տափակ երկայնական սալեր են, որոնց ծավալային ու քանդակային մշակումներով մարդու կերպարանք է տրված: Նրանց հորինվածքի հիմնական առանցքը մարդու մարմինն է, և մնացած բաղադրիչները պատկերագրորեն ու իմաստաբանորեն արժևորվում են նրա հանդեպ ունեցած կապի արդյունքում: Այս սալերը երկու հորիզոնական ակոսների միջոցով բաժանվում են երեք

մասի՝ ընդգծելով մարմնի երեք մասերը՝ գլուխը, որը զբաղեցնում է ամբողջ կոթողի 1/3-ից մի փոքր քիչ ծավալ, իրանն ու ներքնամասը: Կոթողներն ունեն մոտավորապես 30-70 սմ լայնություն, 120-200 սմ, եզակի դեպքերում էլ՝ մինչև 2,5 մ բարձրություն, 30-40 սմ հաստություն: Վերջիններս թվագրվում են Ք.ա. VIII-VI դարերով և ամենայն հավանականությամբ կանգնեցված են եղել դամբարանների վրա (Yeranyan, 2017, 113-138): Կոթողների զուգահեռները նկատելի են Իրանական սարահարթից մինչև Հյուսիսային Կովկաս, Մերձսևծով և այլուր (Burney, 1979, 155; Ingraham, Summers, 1979, 67-87; Azarnoush, 2005, 216-217; Ольховский, Евдокимов, 1994, 1-188):

Չնայած առկա որոշ պատկերագրական տարբերություններին՝ այս կոթողների միևնույն մշակութային ընդհանրությանը պատկանելն ակնհայտ է: Հետազոտողները խոսում են սկյութների կողմից հինարևելյան արձանների կրկնօրինակման մասին (Шульц, 1967, 237): Այս դեպքում մենք կարող ենք խոսել սկյութների կողմից հին իրանական այս ավանդույթը կրկնելու մասին: Գուցե իրենց արշավանքների և այլ շփումների արդյունքում սկյութները տեսել են այս կոթողները և հետագայում որոշ գաղափարական ու ձևաբանական հավելումներ տալով՝ ստեղծել են «սեփականը»: Նախնական դիտարկումներն անգամ բավական են՝ նկատելու համար վաղ իրանական այս կոթողների ազդեցությունը Արցախից, Հյուսիսային Կովկասից և այլ շրջաններից հայտնի նմանատիպ կոթողների վրա: Այս տարածքները կարող էին գրավիչ լինել այդ ցեղերի համար ոչ միայն ավարի և արշավանքների, այլև ժամանակավոր կամ մշտական բնակության ու տարբեր տարածաշրջանների հետ կապ հաստատելու համար:

Հավանական է, որ Դերբենդի լեռնանցքով Կովկաս ներխուժած սկյութները սկզբնապես հաստատվել են Կուր-Արաքսյան ընդարձակ տափարակում և պատմական Հայաստանի հյուսիսարևելյան շրջանում՝ Ուտիք աշխարհի հյուսիսարևմտյան հատվածում: Հավանական է, որ այս տափաստանները զբաղեցել են իրանական քոչվոր անասնապահությամբ զբաղվող ցեղերով, որոնք այս տարածքները բնակեցրել են միայն ձմռան ամիսներին, երբ անասնապահության համար անբարենպաստ պայմաններ էին ստեղծվում տարածաշրջանի լեռնային գոտիներում:

Հարցի ուսումնասիրման նման փորձ ժամանակին իրականացրել է Ա. Իեսենը: Վերջինս չի բացառում, որ սկյութների հեծյալների հորդաները ձմեռել են Մուղանի, Միլի և Ղարաբաղի տափաստաններում, իսկ ամռանը գնացել են ոչ թե Փոքր Կովկասի լեռներ, ինչպես անում էին տեղի ցեղերը մինչև սկյութների հայտնվելը, այլ հարավ՝ Մերձուրմիական շրջաններ՝ Մարաստանի ու Ասորեստանի կենտրոնին մոտ: Այսպիսի կենցաղավարում Ա. Իեսենը նկատում է ավելի ուշ շրջանում՝ հուլավյանների ժամանակ, երբ մոնղոլական հեծյալ խմբերը հաճախ ձմեռում էին Առանում, այսինքն՝ մերձարաքսյան տափաստաններում, իսկ ամռանը բարձրանում էին Ալազաղի լեռներ (Ուրմիա լճի հյուսիսարևմուտքում): Նա նշում է, որ ձմռանը տափաստաններ իջնում էին նախիրն ու բնակչության այն խումբը, որոնց մշտական բնակավայրերը գտնվում էր լեռներում: Այդ պայմաններում կարող էին և պետք է առաջանային ձմեռային թեթև ժամանակավոր բնակավայրեր, որոնք նախատեսված չէին ողջ տարին բնակվելու համար (Иесен, 1965, 21-30): Ուստի միանգամայն հավանական է, որ Կովկասի այս տարածքները տարվա որոշ ժամանակ զբաղեցված են եղել քոչվոր կենսակերպ վարող ռազմական ցեղերով:

Ա. Իվանչիկը, զարգացնելով այդ միտքը, նշում է, որ բացի այդ երկու խմբից՝ Առաջավոր Ասիա են ներթափանցել և գործել նաև ուրիշ էթնումշակութային միավորներ, սակայն ներկայումս հայտնի բազմաթիվ աղբյուրներ հիշատակում են այս երկու խմբերը, և միայն նրանց մասին կարելի է լրջորեն խոսել աղբյուրագիտական ու հատկապես հնագիտական համատեքստում (Иванчик, 2001, 19-20):

Ամփոփելով ասվածը՝ կարող ենք եզրակացնել, որ այս ցեղերի միգրացիան դեպի Կովկաս հավանաբար մի քանի փուլով է ընթացել, որից առաջինը՝ Ք.ա. I հազարամյակի սկզբին: Դա համընկնում է Կովկասում ի հայտ եկած նոր հնագիտական սկզբնաղբյուրների հետ, որոնք մասնագետները պայմանավորում են «կիմմերա-սկյութական» մշակույթի ներթափանցմամբ⁴:

Եզրակացություններ: Ինչպես տեսնում ենք, II հազարամյակի վերջին և I հազարամյակի սկզբներին դեպի Առաջավոր Ասիա շարժուն ցեղերի տեղաշարժերն ակտիվանում են: Դա հաստատվում է թե՛ գրավոր աղբյուրներով և թե՛ հնագիտական սկզբնաղբյուրներով: Սա իր ծավալով ու ազդեցիկությամբ ոչ թե էպիգոդիկ ռազմական գործողություն էր, այլ իսկական վերաբնակեցում:

Հավանաբար, կլիմայական փոփոխություններն էին նաև պատճառը, որ դատելով հնագիտական նյութից գրեթե ամբողջ Կովկասում տարածվում են քոչվորական զանազան ցեղեր, որոնց բնորոշ էին նոր զենքեր, ձիասարք, հատուկ թաղման ծես, տնտեսավարման նոր կերպ: Գրավոր սկզբնաղբյուրների տվյալները, որոնք համապատասխանում են հնագիտականին, թույլ են տալիս ենթադրել, որ դրանց շարքում առանձնակի դերակատարում են ունեցել կիմմերա-սկյութական ցեղերը:

Սկյութների վերաբնակեցման համար նրանց շրջապատող միջավայրում տեղի ունեցող եղանակային-կլիմայական տատանումներից բացի՝ վերաբնակեցման այլ պատճառ կարծես թե չէր կարող լինել: Եվ եթե դա այդպես է, ապա նաև սկյութական վերաբնակեցմանը նախորդող Ք.ա. VIII դարում կիմմերների վերաբնակեցումը կարող էր լինել նույն պատճառով: Զբաղեցնելով Եվրասիական տափաստանների առավել չորային, կիսաանապատային մասը՝ կիմմերները ավելի վաղ, քան սկյութները, կարող էին դժվարություն զգալ անբարենպաստ եղանակային պայմանների պատճառով և շարժվել այլ տարածքներ: Այսինքն՝ Ք.ա. II հազարամյակի վերջին ու I հազարամյակի սկզբին ստեղծվել էր իրավիճակ, երբ մի քանի հարյուրամյակ ձգվող կլիմայական կտրուկ փոփոխությունների պայմաններում այս տափաստաններում հետագա բնակեցումն արդեն դարձել էր անհնար: Սա հավանաբար տարերային, անկանոն փախուստ չէր, այլ կազմակերպված վերաբնակեցում՝ ըստ նախօրոք մշակված ռազմավարության, ինչը ցույց է տալիս, որ սկյութները, ինչպես և կիմմերները, ներկայացնում էին կազմակերպված հասարակություն

⁴ Չնայած «կիմմերա-սկյութական մշակույթ» տերմինը պատմականորեն վերաբերում է միայն հյուսիսամերձսևծովյան ցեղերին, այնուամենայնիվ դրա գործածումը ընդլայնվել է՝ ընդգրկելով նյութական մշակույթի մեծ համալիր, որը դուրս է դրա պատմական շրջանակից (մարամասն տե՛ս Sadykov, Caspari, Blochin 2020):

(Артамонов, 1974, 26): Հակառակ դեպքում, եթե բնակության վայրը լքելը նոր տարածքներ և ավար գրավելն էր, ինչն էլ բարեհաջող պատերազմներից ու հարուստ ավարից հետո նրանք չվերադարձան իրենց «հայրենիք»:

Իհարկե, գերբնակեցումը ևս կարող էր միգրացիայի պատճառ հանդիսանալ: Իսկ կլիմայական փոփոխությունների դեպքում, երբ սննդի աղբյուր հայթայթելը դժվարանում էր, գերբնակեցման պայմաններում միգրացիան կարող էր լինել լավագույն իրավիճակային լուծումներից մեկը: Իսկ բնակչության կտրուկ աճ Ք.ա. IX դարի երկրորդ կեսին վավերացվել է եվրասիական տափաստանների տարբեր գոտիներում (տե՛ս Bokovenkob et al, 2004, 1735-1742): Դա իր հերթին նպաստում էր նոր տիպի կենցաղավարման և մշակույթների ձևավորմանը:

Եղած տվյալներով դժվար է պնդել, որ միգրացիաները տեղի են ունեցել միայն կլիմայական փոփոխությունների պատճառով, սակայն կարող ենք վստահաբար ասել, որ այն էապես նպաստել է դրան: Եվ այստեղ մենք ամբողջովին համաձայն ենք Բ. Վայնբերգի հետ, որ միայն տափաստանային գոտու բոլոր բնակավայրերի էկոլոգիական առանձնահատկությունների ու դրանց բնակչության երկրագործական քաղաքակրթության հետ հարաբերությունների ուսումնասիրությունը թույլ կտա բացահայտել այդ օրինաչափությունները քոչվորների շարժման մեջ, որոնք կարող էին պայմանավորված լինել կլիմայական փոփոխություններով (Вайнберг 1997, 33):

Այնուամենայնիվ, մենք վերջնական եզրակացություններ չենք անում և զիտակցում ենք արտահայտված տեսակետների վիճարկելիության հնարավորությունը: Մեր վարկածի «փորձաքննությունը» հնարավոր կլինի միայն հետագա առավել ընդգրկուն հետազոտությունների դեպքում:

Գրականության ցանկ

1. **Գրեկյան Ե. (2019)**, Կլիմայական փոփոխությունները և ուրարտական պետության անկումը, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2019, № 2, Երևան, էջ 35-71:
2. **Գրեկյան Ե.**, «Ք.ա. VII դ. ճգնաժամ»-ը և մարական տերության կազմավորման խնդիրը// ՊԲՀ, Երևան, 2021, 1(216), էջ 192-218:
3. **Դիողորոս Միկիլիացի (1985)**, Պատմական գրադարան (հատվածներ), Թարգմ. բնագրից, առաջաբան եւ ծանոթագրություններ Ս. Մ. Կրկյաշարյանի, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
4. **Թումանյան Գ.**, Կիմերները եւ սկյութները Հայկական լեռնաշխարհում // ԼՀԳ, 2019, N 2, էջ 219-240:
5. **Հերոդոտոս (1986)**, Պատմություն ինը գրքից (թարգմ.՝ Ս. Կրկյաշարյանի), Երեւան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
6. **Քոսյան Ա. (1999)**, Մերձավորարևելյան ճգնաժամը և Հայկական Լեռնաշխարհը, Երևան, «Զանգակ-97»:
7. **Քսենոփոն (1970)**, Անաբասիս, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
8. **Anthony D. (1986)**, "The Kurgan Culture," Indo-European Origins, and the Domestication of the Horse: A Reconsideration [and Comments and Replies], Current Anthropology, Volume 27, Issue 4, , pp. 291-313.

9. **Arie S. Issar, Mattanyah Zohar (2007)**, Climate Change – Environment and History of the Near East, 2nd Edition, Berlin–Heidelber–New York, Springer-Verlag.
10. **Azarnoush M. Helwing B. (2005)**, Recent Archaeological research in Iran: Prehistory to Iron Age, AMIT, 37, Berlin, pp. 189-246.
11. **Bokovenkob N.A, Burovab N.D., Chugunovc K.V., Dergachevd V.A., Dirksene V.G., Kulkovab M., Naglerf A., Parzingerf H., J. van der Plichtg, Vasilievd S.S., Zaitsevab G.I. (2004)**, Climate change and the expansion of the Scythian culture after 850 BC: a hypothesis B. van Geela), Journal of Archaeological Science 31, 1735-1742.
12. **Bouzek J.**, Caucasus and Europe and the Cimmerian Problem// Sbornik Narodniho Muzea v Praze, V. XXXVII, № 4, 1983, pp. 177-241.
13. **Burney Ch.A. (1972)**, Urartian Irrigation Works, Anatolian Studies, Vol. 22, London, pp. 179-186.
14. **Burney Ch. (1979)**, Meshkinshahr survey, Iran, Vol. XVII, pp. 155-156.
15. **Drake B.**, The Influence of Climatic Change on the Late Bronze Age Collapse and the Greek Dark Ages // Journal of Archaeological Science, Vol. 30, Amsterdam, 2012, pp. 1862-1870.
16. **Ingraham M., Summers G. (1979)**, Stelae and settlements in the Meshkin Shahr Plain, Northeastern Azerbaijan, Iran, AMIT, bd. 12, Berlin, pp. 67-87.
17. **Phillips E. D.**, The Scythian Domination in Western Asia: Its Record in History, Scripture and Archaeology// World Archaeology, Vol. 4, No. 2, Nomads. (Oct., 1972), pp. 129-138.
18. **Sadykov T., Caspari G., Blochin J.**, Kurgan Tunnug 1-New Data on the Earliest Horizon of Scythian Material Culture// Journal of Field Archaeology, 2020. DOI: 10.1080/00934690.2020.1821152.
19. **Yeranyan N. (2017)**, New data on anthropomorphic stelae from the South-East Caucasus: preliminary reflections, Studies in Caucasian archaeology, Tbilisi, Vol. III, pp. 113-138.
20. **Алиев И. (1979)**, О скифах и Скифском царстве в Азербайджане, Переднеазиатский сборник, т. 3, Москва, с. 4-14.
21. **Артамонов М. (1974)**, Киммерийцы и скифы, Ленинград, Изд-во Ленинградского университета.
22. **Вайнберг Б. И.**, Экология Приаралья в древности и средневековье // ЭО, 1997. № 1, с. 23-41.
23. **Демкин В. А., Демкина Т. С. (2003)**, Палеоэкологические кризисы и оптимумы в степях Нижнего Поволжья в IV-II тыс. до н.э., Чтения, посвященные 100-летию деятельности В.А. Городцова в Государственном Историческом музее. Тезисы конференции. М., с. 180-182.
24. **Дударев С.Л.**, К вопросу о месте "киммерийских" комплексов из Западной Азии в системе хронологических и культурных связей Причерноморья, Кавказа и восточных районов Евразии // ВДИ. 1998. № 4, стр. 77-93.
25. **Есаян С. Погребова М. (1985)**, Скифские памятники Закавказья, Москва: «Наука», 152 с.
26. **Иванов И., Луковская Т. (1997)**, Роль пространственно-временных изменений экологических условий евразийских степей в развитии древних культурно-исторических общностей, Эпоха бронзы и ранний железный век в истории древних племен южнорусских степей. Материалы международной научной конференции, посвященной 100-летию со дня рождения П.Д. Рау (1897-1997), Саратов, стр. 79-86.

27. **Иванчик А.** Современное состояние киммерийской проблемы. Итоги дискуссии// ВДИ, 1999, № 2, Москва, с. 77-97.
28. **Иванчик А. (2001)**, Киммерийцы и скифы, Москва, ОАО топография «Новости».
29. **Иессен А. (1965)**, Из исторического прошлого Мильско-Карабахской степи, МИА, № 125, т. 2, Москва-Ленинград: «Наука», с. 10-35.
30. **Клименко В. В.**, Климат и история в эпоху первых высоких культур (3500-500 гг. до н.э.) // «Восток», 1998, No 4, стр. 5-24.
31. **Косян А.**, Кризис XII в. до н. э.: этнические передвижения и депопуляция// «Լրաբեր հասարակական գիտություններ», N 3, Երևան, էջ 45-52:
32. **Крупнов Е.** Киммерийцы на Северном Кавказе // МИА, 1958, № 68, Москва -Ленинград, с. 176-195.
33. **Ольховский В. Евдокимов Г. (1994)**, Скифские изваяния VII-III вв. до н.э., Москва, ИА РАН.
34. **Погребова М. (1971)**, К вопросу о связях восточного Закавказья и Ирана в конце II начале I тыс. до н.э., ИИГК, Москва: «Наука», с. 190-196.
35. **Погребова М. (1981)**, Памятники скифской культуры в Закавказье, Кавказ и Средняя Азия в древности и средневековье, Москва: «Наука», с. 42-57.
36. **Погребова М., Раевский Д., (1992)**, Ранние скифы и Древний Восток, Москва.
37. **Страбон (1964)**, География, Москва: «Наука».
38. **Таиров А. Д., (2003)**, Изменения климата степей и лесостепей центральной Евразии во II – I тыс. до н.э.: материалы к историческим реконструкциям, Челябинск, 2003.
39. **Трейстер М. (2014)**, Ахеменидские «импорты» у кочевников Евразии, Сарматы и внешний мир, Уфа, с. 235-244
40. **Шульц П. (1967)**, Скифские изваяния Причерноморья, Античное общество, Москва: «Наука», с. 225- 237.

REFERENCES

1. **Grjekyan JE. (2019)**, Klimayakan p'op'okhut'yunnjerë ew urartakan pjetut'yan ankumë, «Lrabjer hasarakakan gitut'yunnjeri», 2019, № 2, JErewan, ëj 35-71:
2. **Grjekyan JE.**, «K'.a. VII d. chgnazh'am»-ë ew marakan tjerut'yan kazmavorman khndirë// PBH, JErewan, 2021, 1(216), ëj 192-218:
3. **Diodoros Sikiliats'i (1985)**, Patmakan gradaran (hatvatsnjer), T'argm. bnagrits', arajaban yw tsanot'agrut'yunnjer S. M. Krkyasharyani, JErywan, HSSH GA hrat.:
4. **T'umanyan G.**, Kimjernjerë yw skyut'njerë Haykakan ljernashkharhum // LHG, 2019, N 2, ëj 219-240:
5. **Hjerodotos (1986)**, Patmut'yun inë grk'its' (t'argm. S. Krkyasharyani), JErywan, HSSH GA hrat.:
6. **K'osyan A. (1999)**, Mjerdzavorarewjelyan chgnazh'amë ew Haykakan ljernashkharhë, JErewan, «Zangak-97»:
7. **K'sjenop'on (1970)**, Anabasis, JErewan, HSSH GA hrat.:
8. **Anthony D. (1986)**, The "Kurgan Culture," Indo-European Origins, and the Domestication of the Horse: A Reconsideration [and Comments and Replies], Current Anthropology, Volume 27, Issue 4, , pp. 291-313.

9. **Arie S. Issar, Mattanyah Zohar (2007)**, Climate Change – Environment and History of the Near East, 2nd Edition, Berlin–Heidelber–New York, Springer-Verlag.
10. **Azarnoush M. Helwing B. (2005)**, Recent Archaeological research in Iran: Prehistory to Iron Age, AMIT, 37, Berlin, pp. 189-246.
11. **Bokovenkob N.A, Burovab N.D., Chugunovc K.V., Dergachevd V.A., Dirksene V.G., Kulkovab M., Naglerf A., Parzingerf H., J. van der Plichtg, Vasiliev S.S., Zaitsevab G.I. (2004)**, Climate change and the expansion of the Scythian culture after 850 BC: a hypothesis B. van Geela), Journal of Archaeological Science 31, 1735-1742.
12. **Bouzek J.**, Caucasus and Europe and the Cimmerian Problem// Sbornik Narodniho Muzea v Praze, V. XXXVII, № 4, 1983, pp. 177-241.
13. **Burney Ch.A. (1972)**, Urartian Irrigation Works, Anatolian Studies, Vol. 22, London, pp. 179-186.
14. **Burney Ch. (1979)**, Meshkinshahr survey, Iran, Vol. XVII, pp. 155-156.
15. **Drake B.**, The Influence of Climatic Change on the Late Bronze Age Collapse and the Greek Dark Ages // Journal of Archaeological Science, Vol. 30, Amsterdam, 2012, pp. 1862-1870.
16. **Ingraham M., Summers G. (1979)**, Stelae and settlements in the Meshkin Shahr Plain, Northeastern Azerbaijan, Iran, AMIT, bd. 12, Berlin, pp. 67-87.
17. **Phillips E. D.**, The Scythian Domination in Western Asia: Its Record in History, Scripture and Archaeology// World Archaeology, Vol. 4, No. 2, Nomads. (Oct., 1972), pp. 129-138.
18. **Sadykov T., Caspari G., Blochin J.**, Kurgan Tunnug 1-New Data on the Earliest Horizon of Scythian Material Culture// Journal of Field Archaeology, 2020. DOI: 10.1080/00934690.2020.1821152.
19. **Yeranyan N. (2017)**, New data on anthropomorphic stelae from the South-East Caucasus: preliminary reflections, Studies in Caucasian archaeology, Tbilisi, Vol. III, pp. 113-138.
20. **Alijev I. (1979)**, О скифах и Скифском царстве в Азербайджане, Периодический сборник, т. 3, Москва, с. 4-14.
21. **Aptamonov M. (1974)**, Киммерийцы и скифы, Ленинград, Изд-во Ленинградского университета.
22. **Vaňnbjegy B. I.**, Ekologija Ppiapal'ja v dpjevnosti i cpjednjevjekov'je // EO, 1997. No 1, с. 23-41.
23. **Djemkin V. A., Djemkina T. C. (2003)**, Палеоэкологические кривые и оптимальные условия в степях Нижнего Поволжья в IV-II тыс. до н.э., СХТениа, посвященные 100-летию деятельности В.А. Гоподцова в Государственном Историческом музее. Тезисы конференции. М., с. 180-182.
24. **Dudapjev C.L.**, К вопросу о мекте "киммерийских" комплексов из Западной Азии в сиктеме хронологических и культурных связей Ппичепномор'я, Кавказа и восточных районов Евразии // VDI. 1998. № 4, с. 77-93.
25. **ЈЕcajan C. Pogybeova M. (1985)**, Скифские памятники Закавказья, Москва: «Наука», 152 с.
26. **Ivanov I., Lukovckaja T. (1997)**, По' пространственноп-времевных изменений экологических условий евразийских степей в развитии древних культурно-исторических обш'ностей, Эпоха бронзы и ранний железный век в исторической племенах южнорусских степей. Материалы международной научной конференции, посвященной 100-летию со дня рождения П.Д. Рау (1897-1997), Саратов, с. 79-86.
27. **Ivanchik A.** Совремевные соотояние киммерийской проблемы. Итоги науки// VDI, 1999, № 2, Москва, с. 77-97.

28. **Ivanchik A. (2001)**, Киммерийцы и скифы, Москва, ОАО топография «Новости».
29. **Ijeccjen A. (1965)**, Iz ictopichjckogo pposhlogo Mil'cko-Karabaxckoj stjeri, MIA, № 125, t. 2, Mockva-Ljeningpad: «Nauka», c. 10-35.
30. **Klimjenko V. V.**, Klimat i ictopija v epochu pjepvux vycokix kul'tup (3500-500 gg. do n.e.) // «Voctok», 1998, No 4, ctp. 5-24.
31. **Kocjan A.**, Kpizic XII v. do n. e.: etnichjckije pjepjedvizhjenija i djeponuljacija// «Lrabjer hasarakakan gitut'yunnjeri», N 3, JERYwan, ej 45-52:
32. **Kpupnov JE.** Киммерийцы на Севежном Кавказе // MIA, 1958, № 68, Mockva -Ljeningpad, c. 176-195.
33. **Ol'xovckij V. JEvdokimov G. (1994)**, Ckifckije izvajanija VII-IIIvv. do n.e., Mockva, IA PAN.
34. **Pogpjebova M. (1971)**, K voppocu o cvjazjax voctohnogo zakavkaz'ja i Ipana v koncje II nachalje I tyc. do n.e., IIGK, Mockva: «Nauka», c. 190-196.
35. **Pogpjebova M. (1981)**, Pamjatniki ckifckoj kul'tupy v Zakavkaz'je, Kavkaz i Cpjednjaja Azija v dpjevnoti i cpjednjevjekov'je, Mockva: «Nauka», c. 42-57.
36. **Pogpjebova M., Pajevckij D., (1992)**, Pannije ckify i Dpjevnij Voctok, Mockva.
37. **Страбон (1964)**, Gjeogpafija, Mockva: «Nauka».
38. **Taipov A. D., (2003)**, Izmjenjenija klimata ctjerpej i ljecocctjerpej cjentpal'noj JEv pazii vo II – I tyc. do n.e.: matjepialy k ictopichjckim pjekonctpukcijam, CHjeljabinck, 2003.
39. **Тржејцтјер М. (2014)**, Axjemjenidckije «impopty» u kochjevnikov JEv pazii, Capmaty i vnjeshnij mip, Ufa, c. 235-244
40. **Shul'c P. (1967)**, Ckifckije izvajanija Ppichjepnomop'ja, Antichnoje obsh'jectvo, Mockva: «Nauka», c. 225- 237.

Ներկայացվել է՝ 14.07.2022

Գրախոսվել է՝ 12.08.2022

Ընդունվել է՝ 25.08.2022

Received 14.07.2022

Reviewed 12.08.2022

Accepted 25.08.2022

Получено: 14.07.2022

Рассмотрено: 12.08.2022

Принято: 25.08.2022

E-mail: nzhdehyan@gmail.com